միութարութեան, զի Ադամ յառաջ ցանկացաւ աստուածանալ, և Աստուած խորհեցաւ մարդանալ վասն առաւել զթոյ և մարդասիրութեան։ Եղ Աստուած յերդումն ընդ նախահայրն, իւր միջնորդութեամբ գրել և կնքել մատամբ իւրով ոսկեգիր ի վերայ մագաղաթի, եթէ, ի վեց հազար ամի օր վեցերորդի առաքեմ զմիածին որդի իմ որդի մարդոյ, և զքեզ դարձեալ վերստին յառաջին փառսն կանգնեցից։ Եւ յայնժամ եղիցես դու Ադամ անմահացեալ մարմնով՝ աստուած, ընդ Աստուած միաւորեալ, իբրև զմի ի մէնջ ճանաչել զբարի և զչար։ Այս է գիրն զոր գրեալ մատամբն Աստուծոյ կնքեալ և փակեալ, զոր մատուցին մոգք առաջի Յիսուսի։ Արդ եղեւ կատարեալն զուխտ եւ զխնդրուածս թագաւորացն, իշխանաց եւ ամենայն զօրացն, և կացին ի յայրն աւուրս երիս։ Խորհուրդ առեալ թագաւորացն՝ ասեն, եկայք միաբան երթիցուք և երկիրպագցուք և խոստովանեսցուք զնա Աստուած, և դարձեալ երթիցուք խաղաղութեամբ ըզճանապարհն մեր...։ Եւ ընդ այգն ընդ առաւօտն ի լուսանալ միաշաբաթին՝ յորում էր Տեբեթ ամսոյ քըսան և հինգ և Յունվարի երկոտասան, պատրաստ եղեն գնալ ի յաշխարհն իւրեանց (*)...» (Թան. Բ. էջ 42–52, քաղուածոյք)։

(*) Երեք մոգերուն Տարօն գալու եւ Գասպար թագաւորի գերեզմանին ու անոր վրայ շինուած Ս. Յակոբ եկեղեցիի մասին տեսնել «Կոնդակի մը պատճէն»ը (**Գաւազանագիրք** Կարապետ Վրդ. Լուսարարեանի, 1912, էջ 121-124)։

Երեք թագաւորներու միջնադարեան զրոյցներուն պատմութիւնը տպագրուած է «Chester mysteries» Ա. հատորին վերջը։

Մոգերու մասին կայ ուրիշ հայկական աւանդութիւն մը **Բազմավէպ**ի մէջ (1910, էջ 101)։